600.0105.04.05.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 մայիսի 2016 թվականի №105Ա
ք.Երևան

«ԱՏԼԱՍ-ԷՆԵՐԳՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԱՏԼԱՍ-ԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2016 թվականի մարտի 25-ի №08-03/ԷՀ գրությամբ (այսուհետ՝ Գրություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ տեղեկացնելով, որ «Գառնի Ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Կազմակերպություն) նոր վարկ ստանալու համար մտադիր է կնքել Կազմակերպությունում գրավադրված «Այգեձոր» և «Այգեձոր-2» փոքր հիդրոէլեկտրակայանների անշարժ և շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագիրը,

բ) Ընկերությունը նախկին գրավադրման ժամանակ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով գործարքի վերաբերյալ չի տեղեկացրել Հանձնաժողովին կամ ստացել համաձայնությունը, ուստի Հանձնաժողովը 2016 թվականի ապրիլի 4-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2016 թվականի ապրիլի 25-ի №17-04/ԷՀ գրությամբ ընդունել է կատարված խախտումները և հայցել Հանձնաժողովի ներողամտությունը, միաժամանակ Հանձնաժողով ներկայացնելով Ընկերության և Կազմակերպության միջև 2014 թվականի նոյեմբերի 28-ին կնքված Վ194ա-14 և Վ194բ-14, 2015 թվականի հունվարի 23-ին կնքված Վ003-15, 2016 թվականի մարտի 25-ին կնքված Վ038-16 վարկային պայմանագրերը,

դ) վարկային պայմանագրերի 1.2 կետերի համաձայն՝ ի ապահովումն պայմանագրերով ստանձնած վարկային պարտավորության՝ կնքվել են նշված վարկային պայմանագրերի հավելվածները կազմող գրավի պայմանագրեր, համաձայն որոնց՝

2014 թվականի դեկտեմբերի 4-ին և 2015 թվականի հունվարի 26-ին գրավադրվել են «Այգեձոր» և «Այգեձոր-2» փոքր հիդրոէլեկտրակայանների շենքը և հողամասը, իսկ 2014 թվականի նոյեմբերի 28-ին և 2015 թվականի հունվարի 23-ին՝ նաև շարժական գույքը (արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր), ինչի վերաբերյալ Ընկերությունը չի տեղեկացրել հանձնաժողովին,

2016 թվականի մարտի 31-ին գրավադրվել են «Այգեձոր» և «Այգեձոր-2» փոքր հիդրոէլեկտրակայանների շենքը և հողամասը, իսկ 2016 թվականի մարտի 25-ին՝ նաև շարժական գույքը (արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր), ինչի վերաբերյալ Ընկերությունը Գրությամբ տեղեկացրել է 15 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ.

ե) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար լիցենզավորված անձի գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին,

զ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերության «Այգեձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0105 և «Այգեձոր-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0294 լիցենզիաների լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) նկատմամբ իրավունքի (գրավի, հիփոթեքի) փոխանցումը իրականացվել է առանց Հանձնաժողովին նախապես տեղեկացնելու, իսկ Ընկերության Գրությամբ տեղեկացրած գույքի գրավադրման վերաբերյալ գործարքները իրականացվել են 15 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ, ուստի խախտվել են

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար «ԱՏԼԱՍ-ԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախազգուշացնել:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
4 մայիսի 2016թ.
ժամը՝ 16^{00}